ՆԱԽԱԳԻԾ

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024 թվականի N 171-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 16 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 28-ը նոյեմբերի 2024 թվականի թիվ 16 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 28.11.2024թվականի թիվ 16 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. 2025 թվականի համար Արենի համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

3. 2025 թվականի համար Արենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

4. 2025 թվականի համար Արենիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

5. 2025 թվականի համար Արենի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

6. 2025 թվականի ընթացքում Արենի համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներին վառելիք հատկացնելուն համաձայնություն տալու մասին:

7. Արենի համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի նախագիծը հաստատելու մասին:

8. Արենի համայնքի ավագանու 27.09.2024թ.-ի թիվ 143-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

9. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

10. Արենի համայնքի Ռինդ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,08420հա արդյունաբերական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

11. Արենի համայնքի ավագանու 25.01.2024թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2024թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացումներ և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

12. Արենի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին մանկապարտեզի ծնողական վճարներից զեղչելու և դրամական աջակցություն տրամադրելու մասին:

13. Ամանորին ընդառաջ համայնքում բնակվող բոլոր տնային տնտեսություններին շնորհավորական բացիկներ և նվերներ հատկացնելու մասին:

14. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

15. Արենի համայնքի ղեկավարի գլխավորությամբ ս/թ.-ի դեկտեմբեր ամսին Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաք գործուղվող պատվիրակությանը ծախսերի փոխհատուցման գումար հատկացնելու մասին:

16. Արենի համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՀԱԿՅԱՆ

Նախագիծը պատրաստեց Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյանը